

Ծառայողական օգտագործման համար



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԶՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

## Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԿՈՄԻՏԵԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Ե Ր Ե Վ Ա Ն - 2010

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից 2009 թվականին կատարված հիմնական աշխատանքների վերաբերյալ

2009 թվականի ընթացքում ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատանքային գործունեության հիմքում ընկած էին ՀՀ ջրային օրենսգրքի, ջրի ազգային ծրագրի և ջրի ազգային քաղաքականության մասին օրենքների հիմնադրույթները, ինչպես նաև ՀՀ կառավարության ջրային ոլորտի բարեփոխումներին նվիրված որոշումները (այդ թվում՝ Կայուն զարգացման և պետական միջնաժամկետ ծրագրերը), գերակա խնդիրներն ու միջոցառումները, որոնցով հաստատված են համակարգի հիմնական ծրագրային ուղղվածությունները:

2009 թվականին կոմիտեի կողմից ապահովվել է ՀՀ կառավարության 15.01.2009թ. N 40-Ն որոշմամբ հաստատված հավելվածներով ՀՀ կառավարության 2009 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների կոմիտեին վերաբերող (ՀՀ կառավարության 2009 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի 248-250-րդ կետեր և գերակա խնդիրների 45-51-րդ կետեր) միջոցառումների և գերակա խնդիրների պահանջները:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են աշխատանքները՝ համակարգում կառուցվածքային փոփոխությունների, հաշվառման համակարգի ներդրման ու կատարելագործման, ջրամատակարարման տևողության ավելացման ու ջրի որակի բարելավման, մասնավոր կառավարման պայմանագրերի վերահսկման, մատակարարված ջրի դիմաց վճարների հավաքագրման մակարդակի բարձրացման, համակարգում կորուստների նվազեցման և ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացման, ջրաչափական սարքերի տեղադրման, բյուջետային և վարկային միջոցների արդյունավետ օգտագործման և նոր վարկային ու դրամաշնորհային միջոցների ներգրավման, ինչպես նաև այլ ուղղություններով: Տարվա ընթացքում մամուլում տեղ են գտել ոլորտին վերաբերող բազմաթիվ հրապարակումներ և իրականացվել են մամուլի ասուլիսներ:

***Ջրային տնտեսության ոլորտում ջրային տնտեսության պետական կոմիտեի համակարգմամբ 2009 թվականի ընթացքում կատարվել են հետևյալ հիմնական աշխատանքները.***

1. Կնքված պայմանագրերի (վարձակալության պայմանագիր՝ ֆրանսիական «General Deseau» կազմակերպության հետ և կառավարման պայմանագիր՝ ֆրանսիական Սաուր կազմակերպության հետ) շրջանակներում ապահովվել է «Երևան Ջուր» և «Հայջրնուղկոյուղի» ՓԲԸ-ների արդյունավետ գործունեությունը, ինչպես նաև նշված ընկերությունների մասով ապահովվել է Համաշխարհային բանկի վարկային ծրագրերի համապատասխան չափաբաժիններով իրականացումը:

2. Իրականացվել է Լոռու և Շիրակի մարզերում KfW բանկի ներդրումային ծրագրերի իրականացման գործընթացը, ապահովվել է «Լոռի-ջրնուղկոյուղի», «Շիրակ-ջրնուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների բնականոն գործունեությունները:

3. Ապահովվել է «Լոռի-ջրնուղկոյուղի», «Շիրակ-ջրնուղկոյուղի» և «Նոր-Ակունք» ՓԲԸ-ների կառավարչի ընտրության մրցութային գործընթացը, որի արդյունքները հաստատվել է ՀՀ կառավարության 11.06.2009թ. N 661-Ն որոշմամբ: Մրցույթի հաղթող է ճանաչվել գերմանական «Էմ Վի Վի

Դեկոն Ջի Էմ բի ԷյՋ» (MVV decon GmbH), «Էմ Վի Վի Էներջի Էյ Ջի» (MVV Energie AG) և հայկական «Էյ-ի-Ջի Սերվիս» ՍՊԸ-ների կոնսորցիումը:

4. Ասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ իրականացվող վարկային համաձայնագրի շրջանակներում իրականացվել են համապատասխան շինարարական աշխատանքներ: Սեկնարկել և շարունակվել են ջրամատակարարման համակարգերի բարելավմանն ուղղված շինարարական աշխատանքները 9 քաղաքներում և 40 գյուղական համայնքներում: Կառուցվել են 280 կմ ընդհանուր երկարությամբ նոր ջրագծեր:

5. Սեկնարկել է «Արփա-Սևան» թունելի վթարային հատվածների անհապաղ վերականգնման աշխատանքների իրականացման նպատակով նախատեսված Աբու-Դաբի Ջարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող վարկային ծրագիրը: Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների գնման նպատակով անցկացված մրցույթի արդյունքում ընտրվել է համապատասխան խորհրդատվական կազմակերպություն, որը ներկայացրել է նախագծանախահաշվային փաստաթղթերը: ՀՀ վարչապետի մոտ տեղի ունեցած համապատասխան խորհրդակցության ժամանակ տրված հանձնարարականի հիման վրա աշխատանքներ են իրականացվել ռուսական լրացուցիչ անկախ փորձաքննություն իրականացնող կազմակերպություն ներգրավելու ուղղությամբ: 2009թ. ընթացքում «Արփա-Սևան» թունելի վերականգնման նպատակով կատարվել են 818,7 մլն դրամի շինարարական աշխատանքներ:

6. Ֆրանսիայի կառավարությունից տրվող վարկի շրջանակներում իրականացվող Երևան քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի (այդ թվում՝ «Աէրացիա» կայանի վերագործարկման) բարելավման ծրագրի իրագործելիության ուսումնասիրության, Երևան քաղաքի խմելու ջրի համակարգի բարելավման և մաքրման ծրագրի աջակցման ծառայությունների մատուցման նպատակով մրցութային կարգով ընտրվել է միջազգային խորհրդատվական կազմակերպություն (ՍՈԳՐԵԱ ԿՈՆՍՈՒՆՏԱՆՍ ՍԱՍ), որն իր աշխատանքներն արդեն իսկ սկսել է:

7. Եվրոպական վերականգնման և զարգացման բանկի (EBRD) ֆինանսավորմամբ իրականացվող վարկային ծրագրի շրջանակներում անց են կացվել և սահմանված կարգով հաստատվել են Գավառ, Մարտունի, Վարդենիս, Սևան և Ջերմուկ քաղաքներում կոյուղացանցերի վերանորոգման, ինչպես նաև Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքներում կեղտաջրերի մաքրման կայանների կառուցման մրցույթները: Շինարարական աշխատանքներն ընթացքում են:


8. USAID-ի աջակցությամբ մշակվել է Հայաստանի Հանրապետության ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի երկարաժամկետ ֆինանսավորման իրատեսական ռազմավարությունները և ֆինանսավորման մեխանիզմները, Հայաստանի Հանրապետության ջրային ոլորտում շրջանառու հիմնադրամի ստեղծման հայեցակարգը և շրջանառու հիմնադրամի ստեղծման բիզնես պլանը:

9. Ոռոգում ջրառ իրականացնող «Սևան-Հրազդանյան-ջրառ», «Ախուրյան-Արաքս-ջրառ» և «Դեբետ-Աղստև-ջրառ» ՓԲԸ-ների, ինչպես նաև ոռոգման ջուր մատակարարող 44 ջրօգտագործողների ընկերությունների գործունեությունների արդյունքներով ապահովվել է կայուն ջրամատակարարում և չնայած առկա որոշակի խնդիրների՝ ընկերություններն ունեցել են ֆինանսական կայուն վիճակ:

10. **Համակարգի կազմակերպությունների հիմնական գործունեության վերլուծությունը ցույց է տալիս, որ իրագործվում են հաստատված ծրագրերը՝ տալով զգալի դրական տեղաշարժ:** Քանի որ ՀՀ կառավարության 10.09.2009թ. N 1042-Ն որոշմամբ (ուժի մեջ է մտել 10.10.2009թ.) «Երևանի «Ջրմուկ-կոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքի ջրային համակարգերի վարձակալության մասին


պայմանագրով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ է ճանաչվել Երևանի քաղաքապետը, ուստի ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի 2009 թվականի ընդհանրական ցուցանիշների մեջ ներառվել է նաև «Երևան Ջուր» ՓԲԸ-ի ցուցանիշները: Ընդ որում, միայն հավաքագրումների գծով 2009 թվականի համակարգի գանձումը կազմել է շուրջ 16.85 մլրդ դրամ՝ 2007 թվականի 15.93 մլրդ դրամի փոխարեն կամ ավել է գանձվել շուրջ 920 մլն դրամ (գրաֆիկ 1): Խմելու ջրի մատով գանձվել է շուրջ 13.6 մլրդ դրամ՝ 2008 թվականի 12.5 մլրդ դրամի դիմաց կամ ավել է գանձվել շուրջ 1.1 մլրդ դրամ, իսկ ոռոգման ոլորտում գանձվել է 3.22 մլրդ դրամ՝ 2007 թվականի 3.44 մլրդ դրամի դիմաց կամ պակաս է գանձվել շուրջ 0.22 մլրդ դրամ, ինչը հիմնականում պայմանավորված է քիչ ջրի մատակարարմամբ: Ընդ որում, ոռոգման ոլորտում գանձման տոկոսը 2009 թվականին կազմել է 87.4 %՝ 2008 թվականի 67.6 %-ի դիմաց, կամ գանձման տոկոսն ավել է 19.8 %-ով:

**Գրաֆիկ 1. 2000-2009թթ. խմելու և ոռոգման ջուր մատակարարող կազմակերպությունների գանձման ցուցանիշների համեմատական վերլուծություն (մլն դրամ)**




Էլեկտրաէներգիայի ծախսի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ համակարգում իրականացված ներդրումային և կազմակերպչական միջոցառումների արդյունքում հնարավորություն է ստեղծվել ավելի քիչ էլեկտրաէներգիա ծախսել՝ անցած տարիների համեմատությամբ (գրաֆիկ 2):

**Գրաֆիկ 2. 2000-2009թթ. խմելու և ոռոգման ջուր մատակարարող կազմակերպությունների կողմից ծախսված էլեկտրաէներգիայի ծախսի վերաբերյալ (մլն կվտ.ժամ)**




11. 2009 թվականի հունվարի 1-ից համակարգի խմելու ջուր մատակարարող կազմակերպությունների մասով ավարտվել է բնապահպանական վճարների, ինչպես նաև ավելացված արժեքի հարկի և շահութահարկի վճարման գծով դրամարկղային մեթոդի ժամկետի երկարացման մասին օրենքների արտոնությունները: Համակարգի կազմակերպություններով ՀՀ պետական բյուջե է փոխանցվել շուրջ 5.47 մլրդ դրամի հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ, որը 2008 թվականի համեմատությամբ ավել է շուրջ 910 մլն դրամի չափով (գրաֆիկ 3): Ընդ որում, եթե խմելու ջրի ոլորտի բոլոր կազմակերպությունները նախկինում սուբսիդավորվում էին, ապա ներկայումս «Երևան Ջուր» ՓԲԸ-ն ոչ միայն չի սուբսիդավորվում, այլև ՀՀ պետական բյուջե է վճարել շուրջ 2.27 մլրդ դրամ, այդ թվում՝ մարել է Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման վարկային առաջին ծրագրի վարկից և դրա նկատմամբ հաշվարկված տոկոսներից 476.3 մլն դրամ:

**Գրաֆիկ 3. 2006-2009թթ. խմելու և ոռոգման ջուր մատակարարող կազմակերպությունների կողմից ՀՀ պետական բյուջե փոխանցված գումարների վերաբերյալ (մլն դրամ)**




12. «Երևան Ջուր», «Հայջրնուղկոյուղի», «Լոռի-ջրնուղկոյուղի», «Շիրակ-ջրնուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-րի սպասարկման տարածքներում տեղի է ունեցել ջրամատակարարման տևողության ավելացում (գրաֆիկ 4):

**Գրաֆիկ 4. 2007-2009թթ. խմելու ջուր մատակարարող կազմակերպությունների ջրամատակարարման միջին տևողության վերաբերյալ**




13. 2008թ. Սևանա լճից (առանց Մարտունու տարածաշրջանի պոնպակայաններով իրականացված ջրառը հաշվի առնելու) բաց է թողնվել 125.1 մլն մ<sup>3</sup> ջուր (գրաֆիկ 5):

**Գրաֆիկ 5. 1991-2009թթ. Սևանա լճից ջրի բացթողումների վերաբերյալ (մ)**




Սևանա լիճ է տեղափոխվել 203.05 մլն մ<sup>3</sup> ջուր, որը նախորդ տարվա նույն ցուցանիշը գերազանցում է 12.39 մլն մ<sup>3</sup>: 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Սևանա լճի մակարդակը կազմել է 1899.25 մ, որը նախորդ տարվա նույն ցուցանիշը գերազանցում է 40 սանտիմետրով (գրաֆիկ 6):

**Գրաֆիկ 6. 2001-2009թթ. դրությամբ Սևանա լճի մակարդակների վերաբերյալ (մ)**



14. Շարունակվել է բարելավվել հաշվառման համակարգը, կատարվել է ջրամատակարար կազմակերպությունների միջև գույքային հարաբերությունների և պարտավորությունների ճշգրտումներ, ինչպես նաև իրականացվել են կանոնադրությամբ վերապահված այլ լիազորություններ: Միաժամանակ համակարգի խնելու ջուր մատակարարող կազմակերպությունների սպասարկման տարածքում բաժանորդների մոտ ապահովվել է նաև ջրաչափական սարքերի տեղադրման գործընթացը, որը 2008 թվականի համեմատությամբ ավել է 52.4 հազար հատով (գրաֆիկ 7):

**Գրաֆիկ 7. 2006թ. հունվարի 1-ի դրությամբ առկա և 2006-2009թթ. խմելու ջուր մատակարարող ընկերությունների սպասարկման տարածքում բաժանորդների մոտ տեղադրված ջրաչափերի վերաբերյալ**



15. Աջակցություն է ցուցաբերվել Հազարամյակի մարտահրավերներ ծրագրի ոռոգման ոլորտին ուղղված աշխատանքների իրականացմանը:

16. Երևան, Վանաձոր, Գյումրի, Գորիս, Արթիկ, Էջմիածին, Թալին, Վեդի, Մասիս, Սևան, Աբովյան, Բերդ, Չարենցավան քաղաքներում և 90-ից ավելի գյուղերում (Տեղ, Անիպենզա, Անիավան, Արմաշ, Երասխ, Սուրանեվան, Լանջազատ, Դվին, Տափերական, Գինևետ, Նոր Ուլի, Դաշտաքար, Տափերականն Ղուկասավան, Խաչվար և այլն) ՀՀ պետական բյուջեով նախատեսված ծրագրերով, այդ թվում՝ վարկային, իրականացվել են խմելու ջրի մատակարարման բարելավման աշխատանքներ: Խմելու ջրի մատակարարման ոլորտում իրականացված ներդրումային ծրագրերի իրականացման արդյունքում 2009 թվականի ընթացքում ջրամատակարարման ապահովման համար շինարարական աշխատանքներ են իրականացվել այնպիսի գյուղերում, որոնք տարիների ընթացքում ընդհանրապես ջուր չեն ունեցել, մասնավորապես, Տեղ, Արավուս, Անիպենզա և Անիավան գյուղերը: Խմելու ջրի ոլորտում 2009 թվականի ընթացքում իրականացված ներդրումային ծրագրերի արդյունքում ապահովվել է շուրջ 350 կմ-ից ավել ջրագծերի, այդ թվում՝ ներքին ցանցերի փոխարինման, 100-ից ավել օրվա կարգավորիչ ջրամբարների կառուցման և նորոգման, 50-ից ավել պոմպակայանների կառուցման և նորոգման, 5000-ից ավել անհատական տնային միացումների իրականացման և այլ աշխատանքներ:

17. Ոռոգման ոլորտում 2009 թվականի ընթացքում իրականացված ներդրումային ծրագրերի արդյունքում ապահովվել է շուրջ 50 կմ-ից ավել ջրագծերի, այդ թվում՝ ներքին ցանցերի փոխարինման, 20-ից ավել ջրամբարների նորոգման, 50-ից ավել պոմպակայանների կառուցման ու նորոգման և այլ աշխատանքներ: Մեկնարկել է ոռոգման համակարգերի հրատապ վերականգնման վարկային ծրագիրը, իրականացվել են հիմնական մրցույթները և Թալինի և Արմավիրի մայր ջրանցքներում սկսվել են համապատասխան շինարարական աշխատանքները:

18. Աշխատանքներ են իրականացվել կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և նորոգման աշխատանքների, ինչպես նաև գրունտային ջրերի մակարդակների որոշման աշխատանքների իրականացման ուղղություններով:

Ջրային տնտեսության ոլորտում վերը նշված աշխատանքների իրականացման արդյունքում խմելու և ոռոգման ջրերի մատակարարման, ինչպես նաև ջրահեռացման ոլորտներում 2009 թվականի

ընթացքում ապահովվել է համակարգերի հուսալի և անվտանգ շահագործումը, բարելավվել է խմելու և ոռոգման ջրամատակարարումը, իրականացվել է անվտանգ շահագործում, կրճատվել են կորուստները, ապահովվել է էներգախնայողություն, բարելավվել է ծառայությունների մատուցման որակը, ապահովվել է ջրամատակարարման շարունակականության ավելացումը և այլն:

2010 թվականի ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի համակարգում կարևորվում են հետևյալ հիմնական աշխատանքների իրականացումը`

1. «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Նոր Ակունք», «Սևան-Հրազդանյան-ջրառ», «Ախուրյան-Արաքս-ջրառ» և «Դեբետ-Աղստև-ջրառ» փակ բաժնետիրական ընկերություններում ինքնաձախսածածկման մակարդակի բարձրացման ուղղությամբ աշխատանքների իրականացում:

2. Ասիական զարգացման բանկի, Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական զարգացման բանկի, Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող` «Ջրամատակարարման և ջրահեռացման {սեկտերի} ծրագրի», «Լոռու (Վանաձոր) և Շիրակի (Գյումրի) մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավում» ծրագրի, «Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման» ծրագրի (լրացուցիչ ֆինանսավորում), Աբու Դաբիի Ջարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Արփա-Սևան թունելի վարկային ծրագրի իրականացման ապահովում:

3. Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական բանկի կողմից ֆինանսավորվող «Սևանա լճի բնապահպանական ծրագրի» շրջանակներում Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքների կոյուղաջրերի մաքրման կայանների նախագծում և շինարարական աշխատանքների իրականացում, ինչպես նաև Գավառ, Մարտունի, Վարդենիս, Սևան և Ջերմուկ քաղաքների կոյուղու ցանցերի վերանորոգում:

4. Ոռոգման համակարգերի շահագործման հուսալիության և արդյունավետության բարձրացմանն ուղղված Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի հրատապ վերականգնման վարկային ծրագրի իրականացման ապահովում:

5. «Հայջրմուղկոյուղի», ՓԲԸ-ի մասով ջրային համակարգերի օգտագործման նոր ձևի (վարձակալություն) ներդրման միջոցառումների իրականացում, «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերություններում մասնավոր կառավարիչների հետ կնքված պայմանագրերով 2010 թվականի համար նախատեսված ցուցանիշի կատարման ապահովում:

6. Ոռոգման համակարգերի մասնակցային կառավարման ամրապնդում և ջրօգտագործողների ընկերությունների խոշորացում:

7. Համաշխարհային բանկի, KfW բանկի և Եվրոպական վերականգնման և զարգացման բանկի (EBRD) հետ նոր վարկային ծրագրերի նախապատրաստում և իրականացում:

8. Ջրային համակարգերի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման և բարելավման ուղղությամբ աշխատանքների իրականացում:

**ՀՀ տարածքային կառավարման նախարարության  
ջրային տնտեսության պետական կոմիտե**